«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Երևակայության զարգացման հնարների մշակումը աշխարհագրության ուսուցման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Աշխարհագրություն
ՀԵՂԻՆԱԿ	Մերինե
ՄԱՐԶ	Նիկողոսյան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Երևան
	Շ: Շահամիրյան Կրթահամլիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ...…… էջ 2
ԳԼՈՒԽ 1 Աշխարհագրություն առարկան և աշակերտի երևակայությունը:……... էջ 3
1.1 Երևակայության զարգացման հնարների մշակումը տարրական դասարանների համար: ...…… էջ 5
1.2 Երևակայության զարգացման հնարների մշակումը միջին դասարանների համար: ..……էջ 9
1.3 Երևակայության զարգացման հնարների մշակումը ավագ դասարանների համար: ...……էջ 13
ԳԼՈՒԽ 2 Աշխատանք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող / ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ: ...……էջ 15
Եզրակացություն ……... էջ 19
Առաջարկություն ……... էջ 20
Գրականության ցանկ ..…… էջ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտի երևակայության զարգացման հնարների մշակման վերաբերյալ այս թեման խիստ կարևոր է և հետաքրքիր: Յուրաքանչյուր մանկավարժ պետք է ուսումնասիրի հնարավոր բոլոր ուղիներն ու միջոցները, որոնց օգնությամբ կարելի է մշակել աշակերտի երևակայության զարգացմանը նպաստող հնարներ:

Ստորև ներկայացված են տվյալ թեմային վերաբերող անհատական փորձի հիման վրա արված վերլուծություններ, մշակված և գործնականում կիրառված հնարների ներկայացում, նկարագրում, ինչպես նաև տարբեր դասարանների համար մշակված հնարների համեմատում, գնահատում:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԻ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Երևակայությունը նկարում է,
բանականությունը համեմատում է,
ճաշակը ընտրում է,
տաղանդը իրագործում է»:
Լևիս Գաստոն դը

Աշխարհագրությունը, դեռևս անտիկ ժամանակներից սկսյալ ուղեկցվել է մարդկային երևակայությամբ:

Աշխարհագրություն գիտությունը իր զարգացման առաջին փուլերում, երբ որպես նրա հիմնական նպատակ հանդիսանում էր հեռավոր երկրների, նոր ցամաքների հայտնագործումը, ինչպես նաև երկրագնդի ձևի, տեսքի, նրա կառուցվածքի բացահայտումը, մարդը հաճախ դիմում էր իր երևակայությանը:



Նկ.1. Երկիր մոլորակը ըստ հին հնդիկների:

Այսօր արդեն, աշխարհագրությունը որպես դպրոցներում ուսումնասիրվող առարկա, մարդկային երևակայությունը օգտագործում է՝ այս կամ այն նյութը հնարավորինս լավ յուրացնելու, աշակերտների կողմից դասը ինքնուրույն կերպով ընկալելուն և հասկանալուն նպաստելու համար:

Այժմ ուսուցիչները մշակում են տարատեսակ հնարներ, որպեսզի զարգացնեն աշակերտի երևակայությունը՝ աշխարհագրական գիտելիքները յուրացնելու համար:

Հարկ է նշել, որ երեխայի երևակայությունը խթանելիս, մանկավարժը պետք է այն հմտորեն կապի վերջինիս տրամաբանության հետ:

Հատկանշական է, որ ի տարբերություն ստեղծագործական երևակայության, որն, իհարկե իր բաժինն ունի այս պարագայում, սակայն աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտի երևակայության հիմքում պետք է ընկած լինի գիտելիքը, որը նա ստացել է նախկին դասերի ընթացքում, և որը թույլ կտա նրան նոր դասը, երևակայության և պատկերացման օգնությամբ ավելի հեշտ յուրացնել:

Այն մասին, որ երևակայության միջոցով նոր դասի յուրացումը առավել արդյունավետ է իրականանում, վկայում են թե՛ մանկավարժները, թե՛ հոգեբանները: Սրա մասին մանրամասն խոսել են ականավոր հոգեբաններ՝ Նալչաջյանը, Պետրովսկին և այլն:

Ելնելով գործնականում կիրառած սեփական փորձերից, կարող ենք վկայել, որ աշխարհագրություն առարկայի ուսուցման մեջ, աշակերտի երևակայության զարգացման համար առավել նպաստավոր թեմաներ են ֆիզիկական աշխարհագրությանը վերաբերող դասընթացները, այս մասին կխոսենք քիչ հետո, երբ անդրադառնանք տարբեր դասարաններում կիրառվող հնարների մասին:

Իհարկե, աշխարհագրություն առարկայի ուսուցման մեջ յուրաքանչյուր փուլ ունի իր հետաքրքրությունը, ունի երևակայությունը զարգացնելու համար իր հնարավորությունները: Աշխարհագրության թե՛ տնտեսական, և թե՛ ֆիզիկական ճյուղերը լայն հնարավորություն են տալիս մանկավարժին, որպեսզի նա օգտագործելով աշակերտների երևակայական հնարավորությունները, դասը առավել արդյունավետ վարի:

Երևակայության զարգացման հնարների մշակումը տարրական դասարանների համար

Ինչպես գիտենք, տարրական դասարաններում «Աշխարհագրություն» առարկան, որպես այդպիսին, չի դասավանդվում:

2012 թվականի, աշխարհագրություն առարկայի չափորոշիչի համաձայն, դպրոցական ծրագրում այն ունի հետևյալ ժամաքանակը.

- 2-4-րդ ՝ տարրական դասարաններում դասավանդվում է «Ես և շրջակա աշխարհը» առարկան, որտեղ գիտական նյութը պարզեցված է, նախատեսված է տվյալ տարիքային շերտի աշակերտների մտավոր զարգացվածության աստիճանի համար:
- 5-9-րդ ՝ միջին դասարաններում պատկերը հետևյալն է.
  5-րդ դասարանում դասավանդվում են «Բնագիտություն» և «Հայրենագիտություն» առարկաները, 6-րդ դասարանում՝ «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն» առարկան,
  7-րդ դասարանում՝ «Հասարակական աշխարհագրություն», 8-րդ դասարանում՝ «Ռեգիոնալ/տարածաշրջանային աշխարհագրություն»,
  9-րդ դասարանում՝ «Հայաստանի Հանրապետության աշխարհագություն» առարկան:
- 10-12-րդ՝ ավագ դասարաններում դասավանդվում է «Աշխարհագրություն» առարկան;

Ինչպես երևում է վերը շարադրվածից, տարրական դասարաններում աշակերտներին փոխանցվում է մակերեսային գիտելիք աշխարհագրություն առարկայի վերաբերյալ:

Այս պայմաններում, սակայն, ևս հնարավոր է երևակայության միջոցով երեխայի մոտ որոշակիորեն զարգացնել **աշխարհագրական մտածողություն** և վերլուծելու ունակություն:

Ուսումնաճանաչողական պրակտիկայի շրջանակներում աշակերտների վարքը աշխարհագրության ուսուցման ընթացքում ուսումնասիրելու արդյունքում եկանք այն եզրահանգման, որ անգամ ամենապասիվ դրսևորում ունեցող աշակերտը ակտիվության որոշակի աճ է գրանցում այն դեպքում, երբ ուսուցիչը ընդհանուր, ֆրոնտալ/ճակատային հարցում է կատարում դասարանին: Սակայն ակտիվության աստիճանն առավել բարձրանում է այն ժամանակ, երբ ուսուցիչը, տրամաբանական հարցերի միջոցով աշակերտներին ուղղորդում է երևակայելու, վերլուծելու և հարցի պատասխանն ինքնուրույն գտնելու: Այս դիտարկումը օգտակար է ապագա մանկավարժների համար՝ հետագայում իրենց մասնագիտական գործունեությունը ծավալելու ժամանակ ավելի արդյունավետ աշխատելու համար:

Տարրական դասարանների աշակերտներին բնորոշ է երևակայության զարգացման խոսքային տիպը: Սա երևակայության զարգացման այն տիպն է, երբ երեխան իր երևակայությունը զարգացնում է իրենից ավելի ավագ սերնդի խոսքը լսելով, այն յուրացնելով և վերարտադրելով:

Այս փաստը թույլ է տալիս ենթադրել, որ տարրական դասարանների հետ աշխատող մանկավարժը, աշակերտների երևակայությունը զարգացնելու համար պետք է առավել պատկերավոր խոսքով, երբեմն պատմվածքների, նույնիսկ հեքիաթների միջոցով ներկայացնել օրվա դասը:

Տարրական դասարաններում սովորող աշակերտների երևակայությունը զարգացնելու համար հիանալի միջոց է նաև օրվա դասի ավարտին, յուրացված նյուտը թղթի վրա պատկերելու հնարը:

Դասի ավարտից մոտ 8-10 րոպե առաջ, աշակերտներին բաժանվում են թղթեր և գունավոր մատիտներ, ապա տրվում է հանձնարարություն՝ պատկերել այն ամենը, ինչի մասին այսօր խոսեց ուսուցիչը (եթե, իհարկե, օրվա նյութը թույլ է տալիս նման հանձնաարություն տալ): Այս դեպքում զարգանում է երեխայի երևակայությունը, սերտած դասի և սեփական մտահորիզոնի միջև ստեղծվում է կապ: Հատկանշական է և շատ կարևոր նշել նաև այն, որ նման հանձնարարությունների ժամանակ, ցածր դասարանի աշակերտն իրեն կարևորված է զգում, հասկանում է, որ ուսուցչի կողմից գնահատվում է իր պատկերած նկարը, այն զբաղմունքը՝ նկարչությունը, որով նա, ամենայն համվանականությամբ սիրում է զբաղվել ազատ ժամանակ, այժմ ուսուցչի կողմից տրվում է որպես հանձնարարություն: Այս հնարը մեծ խթան է հանդիսանում աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների բարելավման հարցում:



Նկ.2. Տարվա եղանակները նույն վայրում

ըստ տարրական դասարանի աշակերտի:

Որպես տարրական դասարաններում սովորող աշակերտների երևակայությունը խթանող հնար, օգտաար է կիրառել նաև գրավիչ, գունագեղ, մուլտիպլիկացիոն մոդելներ, նկարներ, որոնք կվերաբերեն տվյալ օրվա դասին:

Հետաքրքիր պատկերները ցուցադրելուց հետո, որպես հանձնարարություն աշակերտներին տրվում է ուրվագծված պատկերներ, որպեսզի նրանք ինքնուրույն պատկերացնելով, երևակայելով գունավորեն դրանք:

Այս հնարը թույլ է տալիս երեխաներին մտածել, պատկերացնել և թղթին հանձնել սեփական երևակայության արդյունքները:

Նկ. 4. Երկիր մոլորակի պատկերը

Մուլտիպլիկացիոն ձևավորմամբ

Ցածր դասարաններում սովորող աշակերտների համար կարելի է երևակայությունը զարգացնող տարբեր հնարներ մշակել, սակայն հարկավոր է հիշել, որ տարրական դասարաններում «Աշխարհագրություն» առարկան, իր բուն կառուցվածքով չի ուսուցանվում:

Երևակայության զարգացման հնարների մշակումը միջին դասարանների համար

Կիրառական-վերլուծական պրակտիկան անց ենք կացրել Երևան քաղաքի, Միսաք Մանուշյանի անվան թիվ 48 իմնական դպրոցում, որտեղ դասավանդել ենք միջին դասարաններում (6-9-րդ դասարաններ):

Պրակտիկայի շրջանակներում մշակած և կիրառած հնարների արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ միջին դասարաններում երևակայության զարգացմանն ուղղված աշխատանքները արդարացնում են մեր սպասելիքները, քանի որ այս տարիքի երեխաները, հիմնականում ունեն վառ երևակայություն և ստեղծագործական միտք:

Այս առանձնահատկությունը հակված ենք կապել ոչ միայն տարիքային, այլ նաև ազգային առանձնահատկություններով, քանի որ հայ դեռահասները աչքի են ընկնում վառ

արտահայտված ստեղծագործ մտքով և լայն մտահորիզոնով: Այս մասին են վկայում կերպարվեստի, քանդակագործության, թատրոնի, ինչպես նաև շախմատի, ֆիզիկայի, և ինչո՞ւ ոչ, աշխարհագրության միջազգային մրցույթներում հայազգի պատանիների գրանցած գերազանց արդյունքները:

Վեց շաբաթվա ընթացքում, միջին դասարաններում դասավանդելիս մշակել ենք տարբեր հնարներ, որոնք նպաստել են դասի արդյունավետ յուրացմանը, ինչպես նաև աշակերտների երևակայության զարգացմանը, նրանց մոտ աշխարհագրության նկատմամբ հետաքրքրության ավելացմանը:

Հարկ է նշել, որ թեև 5-9-րդ դասարանների աշակերտները, որպես ընդհանուր միավոր, կոչվում են միջին դասարանի աշակերտներ, սակայն պետք է հիշել, որ այս միավորի մեջ ներգրավված են տարիքային տարբեր խմբի երեխաներ, նրանք ունեն երևակայության տարբեր աստիճանի զարգացվածություն, տարբեր ունակություններ, աշխարհագրություն առարակայից տարբեր մակարդակի գիտելիքներ, և իհարկե, տարբեր հետաքրքրություններ:

Այդ հնարներից կնշենք մի քանիսը:

Պատմվածքի հնար

Այս հնարը շատ արդյունավետ է բացառապես բոլոր միջին դասարանների դեպքում:

Հնարի էությունը կայանում է նրանում, որ ուսուցիչը աշակերտներին թելադրում, կամ թղթերի վրա հանձնում է աշխարհագրական բովանդակություն պարունակող մի պատմվածքի ոչ ամբողջական մոդել: Ներկայացված է առաջին մեկ կամ երկու նախադասությունը, ապա դրված են բազմակետեր: Աշակերտը պետք է կարողանա շարադրել պատմվածքը՝ պատմությանը տալով տրամաբանական շարունակություն՝ պահպանելով աշխարհագրական առանձնահատկությունները:

Այս հնարի շնորհիվ, աշակերտի երևակայությունը զարգացնելուց զատ, մանկավարժի համար հնարավորություն է ստեղծվում նաև ստուգել նրա գիտելիքները:

Նմանատիպ պատմվածքի նմուշ ներկայացնում ենք ստորև.

« Ծեր ճանապարհորդը նավաբեկության պատճառով հայտնվել էր մի անմարդաբնակ վայրում, որտեղ չկար բուսականություն, իսկ կենդանական աշխարհի ներկայացուցիչներից երևաց միայն մի անհայտ միջատ, որը փորձում էր շոգից պատսպարվել ավազի տակ: Մի քանի րոպե անց ծեր ճանապարհորդը նկատեց, որ քամի է սկսվում, այն գալիս էր ծովի կողմից: Նա փորձում էր կողմնորոշվել տեղանքում, երբ հանկարծ...»

Այս պատմվածքը հանձնարարվում է 6-րդ դասարանում, քանի որ խոսքը գնում է տեղանքի ֆիզիկական հատկանիշների մասին:

«Գոյություն չունեցող պետության» հնար

Այս հնարի էությունը հետևյալն է.

Դասարանում հայտարարվում է մի քանի պետության անուն, ապա տրվում է հանձնարարություն, որի համաձայն աշակերտները պետք է այս պետություններից վերցնեն լավագույն հատկանիշները՝ ՏԱԴ, ՔԱԴ, տնտեսական առանձնահատկություններ, հարևան պետությունների հետ հարաբերություններ և այլն, ապա ստեղծեն երևակայական մի «իդեալական պետություն», որը, սակայն պետք է լինի հնարավորինս իրատեսական:
Այս հնարը կիրառվում է 7-րդ դասարանում:

«Նախագահական » հնար

Այս հնարի էությունը հետևյալն է.

Աշակերտների միջև բաժանվում են պետությունները, ապա տրվում է 15 րոպե ժամանակ՝ մտածելու, պատրաստվելու, նշումներ անելու համար: Ժամանակի լրանալուց հետո, աշակերտները զույգերով մոտենում են գրատախտակին և սկսվում են «բանակցությունները»: Յուրաքանչյուր աշակերտ ներկայանում է որպես իրեն տրված պետության նախագահ և փորձում դիվանագիտորեն կարգավորել իր երկրի հիմնխնդիրները, օգտագործելով տվյալ պետությանը բնորոշ ռեսուրսները, ինչպես նաև հարաբերություններ պարզել այլ պետությունների «նախագահների» հետ:
Այս հնարը իսկապես շատ արդյունավետ է աշակերտների երևակայությունը արգացնելու համար, նաև ամբողջ դասարանը դասապրոցեսի մեջ ընդգրկելու համար:
Երևակայության զարգացման համար մշակված այս հնարը նախատեսված է 8-րդ դասարանի աշակերտների համար:

«Նոր Հայաստան»-ի հնար

Այս հնարի էությունը հետևյալն է.

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզ, դրանց առանձնահատկությունները, բնական ռեսուրսները և այլն, աշակերտները փորձում են մի քանի մարզ կցել միմյանց կամ հակառակը՝ մի մարզը տրոհել մի քանի մասի, ինչպես նաև կառուցել երևակայական ՋՐԷԿ-ներ, մշակել մեթոդներ՝ Սևանա լճի հիմնախնդիրը լուծելու համար: Ինչպես նաև հարևան երկրների հետ հարաբերությունները

կարգավորելու նպատակով գտնել ելք, և նմանատիպ այլ կարևոր որոշումներ կայացնել, իհարկե, երևակայական մակարդակի վրա:
Աշակերտներն իրենց ողջ աշխատանքը հանձնում են թղթապանակի տեսքով (Կիրառական-վերլուծական պրակտիկայի ժամանակային սահմանափակման պատճառով, աշակերտներից թղթապանակներ պահանջել չհաջողվեց):

Վերլուծելով միջին դասարանների համար մշակված այս հնարները հանգում ենք այն եզրակացության, որ դրանք, հիմնականում, արդարացնում են մեր սպասելիքները: Այս հնարներն օգտագործելով ուսուցիչը կարողանում է աշակերտի մեջ զարգացնել աշխարհագրական մտածողություն՝ **տարածաժամանակային վերլուծություն կատարելու ունակություն,** ինչպես նաև նախորդ դասերի ընթացքում պաշարած գիտելիքների արդյունավետ օգտագործում ուսուցչի կողմից հանձնարարված յուրաքանչյուր առաջադրանքի դեպքում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ յուրաքանչյուր խմբային, կամ աշակերտից ինքնուրույն, ակտիվ գործունեություն պահանջող հանձնարարություն ենթադրում է քննարկում աշակերտների միջև, մի փոքր աղմուկ, դասարանում որոշակի շարժ, երեխաների ոգևորությունից բխող աշխուժություն և այլն: Կարևոր է մանկավարժի ըմբռնումը և իրավիճակին տիրապետելու ունակությունը նման պարագայում:

Երևակայության զարգացման հնարների մշակումը ավագ դասարանների համար

Ի տարբերություն նախորդ խմբերի աշակերտների հետ տարվող աշխատանքների, ավագ դասարանների հետ աշխատանքը ենթադրում է ազատ ոճի հանձնարարություններ, այս դեպքում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները վերածվում են համագործակցային հարաբերությունների:

10-12-րդ դասարանների աշակերտները, որպես կանոն, իրենց ապագա մասնագիտությունն արդեն իսկ հստակ որոշած, որևէ ոլորտում իրենց գիտելիքները խորացնող դեռահասներ են, ովքեր պահանջում են յուրահատուկ վերաբերմունք:

Այս դեպքում ևս, աշխարհագրություն առարկան ունի լայն հնարավորություններ՝ աշակերտների երևակայությունը զարգացնելու միտումով տարատեսակ հնարներ մշակելու համար:

Հայտնի է, որ ավագ դասարանների համար նախատեսված «Աշխարհագրություն» առարկայի դասագրքերն իրենց մեջ ամփոփում են նախորդ տարիների ընթացքում

ուսուցանվող աշխարհագրական գիտելիքի ողջ պաշարը, այստեղ առավել համալիր կերպով ներկայացված են աշխարհագրական հասկացությունները, առարկայի ֆիզիկական և տնտեսական ճյուղային կառուցվածքը և այլն: Այս առանձնահատկությունը ծառայում է որպես նոր հնարների մշակման աղբյուր:

Ինչպես արդեն նշվեց, ավագ դպրոցի աշակերտներն ունեն նախասիրած գիտական ուղղություններ, նրանք խորացված ուսումնասիրում են այս կամ այն գիտությունը, սա նպաստավոր գործոն է աշխարհագրությունը որևէ այլ գիտության հետ համեմատելու և, այսպիսով, աշակերտի երևակայությունը զարգացնելու համար



Նկ. 6. Միջառարկայական կապերի խորհրդանիշ: (Կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն)

Որպես օրինակ նշենք միջառարկայական սերտ կապը աշխարհագրության և տնտեսագիտության միջև:

Այն աշակերտը, ով ընտրել է տնտեսագիտությունը որպես ապագա մասնագիտություն, կարող է ինքնուրույն նկատել, վերլուծել և ուսուցչին ներկայացնել այս երկու գիտական ճյուղերի միջև եղած կապերը:

Նույն կերպ կարելի է գտնել աշխարհագրության և ֆիզիկայի միջև եղած միջառարկայական կապը և այսպես շարունակ:

Մանկավարժական տեսանկյունից կարևոր նախապայման է աշակերտին չպարտադրել որևէ թեմա, այլ թույլ տալ նրան ինքնուրույն ընտրել այն՝ իր հետաքրքրության շրջանակներում: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ ավագ դասարանների աշակերտներն ունեն նուրբ հոգեկերտվածք, կապված ֆիզիոլոգիական փոփոխությունների հետ, տարիքի անցումային շրջանի, հուզական վիճակի և դեռահասներին բնորոշ այլ առանձնահատկությունների հետ:

Աշխատանք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող / ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:

Ինչպես հայտնի է, 2005 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ է մտել «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը:
Դրանով պետականորեն ճանաչվել և ամրագրվել է նաև ներառական կրթությունը Հայաստանում:

Այս փաստը ենթադրում է, որ աշխարհագրության ուսուցումը դպրոցներում ևս պետք է հարմարեցվի ներառական կրթության պահանջներին:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Աշխարհագրության ուսուցումը բնույթով բազմազան է, հարուստ, այն ուսուցչին ընձեռում է լայն հնարավորություններ՝ աշակերտների երևակայությունը զարգացնելու համար: Սակայն հատկանշական է, որ նույնիսկ այս պարագայում մանկավարժին հաջողվում է զարգացնել երեխայի երևակայությունը միայն այն դեպքում, երբ վերջինս չունի մտավոր խանգարում կամ հետամնացություն:

Եթե երեխայի մոտ դիտվում է միայն ֆիզիկական խանգարում, սահմանափակ են տեսողական, լսողական ունակությունները, և կամ ունի հենաշարժողական խնդիր, սակայն մտավոր զարգացվածությունը համապատասխանում է տարիքակիցների նորմայի չափանիշներին, ապա աշխարհագրության ուսուցիչը կարող է և պարտավոր է տվյալ աշակերտի հետ աշխատել նույն ինտենսիվությամբ, ինչպես այլ աշակերտների հետ:

Սակայն, եթե առկա է մտավոր հետամնացություն, ապա անհրաժեշտ է ցուցաբերել բոլորովին այլ մոտեցում:

Գիտությանը հայտնի է, որ մտավոր հետամնացությունն ունի հատուկ դասակարգում: Մանկավարժը պետք է ծանոթ լինի դրան:

Այսպիսով, տարբերում են մտավոր հետամնացության հետևյալ ձևերը.

1. Թեթև աստիճանի մտավոր հետամնացությամբ (դեբիլությամբ) տառապողները մինչև 5 տարեկանը կարող են տիրապետել որոշակի սոցիալական հմտությունների և ունակ են շփման, առկա է զգայաշարժական ոլորտների նվազագույն հետամնացություն: Ուշ դեռահասային տարիքում ի վիճակի են հասնել որոշակի կրթական հաջողությունների՝ մինչև 6-րդ դասարանի մակարդակը, նաև ցուցաբերել համապատասխան սոցիալական վարքագիծ: Չափահաս տարիքում ի վիճակի են սպասարկել իրենց, կատարում են սովորական տնային գործերը: Թեթև աստիճանի մտավոր հետամնացության դեպքում կրթությունն էականորեն օգնում է ունակություններ ձեռք բերել: Նման մարդիկ կարող են կատարել վերացական մտածողություն չպահանջող և գործնական ոչ բարձր որակավորում պահանջող աշխատանքներ, սակայն աջակցության և ղեկավարման կարիքն ունեն սոցիալական և տնտեսական սթրեսների պայմաններում:Սրա դեպքում մտավոր գործակիցը (ըստ IQ թեստի) 50-69-ի սահմաններում է: Առկա է ըմբռնողականության, խոսքի զարգացման տարբեր աստիճանի ուշացումը: Ծագման օրգանական գործոնը քչերի մոտ է հայտնաբերվում: Երբեմն հայտնաբերվում են ուղեկցող վիճակներ՝ աուտիզմ, զարգացման այլ խանգարումներ, էպիլեպսիա, վարքի խանգարումներ և ֆիզիկական անդամալուծություն:

2. Չափավոր աստիճանի մտավոր հետամնացությամբ (իմբեցիլությամբ) տառապող անձինք վաղ տարիքում կարող են խոսել և սովորել շփվել, ունեն ոչ վատ շարժողական զարգացում, սակայն վատ են կողմնորոշվում: Կարելի է սովորեցնել ինքնախնամքի հմտություններ: Ավելի բարձր տարիքում հազվադեպ է զարգանում երկրորդ դասարանցու մակարդակից ավելի, սակայն կարող է ձեռք բերել սոցիալական և մասնագիտական հմտություններ, ինքնուրույն տեղաշարժվել ծանոթ վայրերում: Հասուն տարիքում այս անձինք, սովորաբար, ընդունակ են կատարել որակավորված գործեր՝ հսկողության պայմաններում: Փոքր իսկ սթրեսի դեպքում կարիք ունեն պաշտպանության և օգնության: Մտավոր զարգացման գործակիցը գտնվում է, սովորաբար, 35-49-ի սահմաններում: Խոսքի զարգացման մակարդակը տարբեր է. ոմանք ի վիճակի են մասնակցել առօրյա զրույցի, իսկ մյուսները կարող են արտահայտել խոսքով միայն իրեն պահանջմունքները՝ աղքատ բառապաշարի հետևանքով: Որոշ մասն էլ զրկված են խոսելու հնարավորությունից, չնայած հասկանում են պարզ հանձնարարությունները և կարող են սովորել ձեռքերի նշաններով ինչ-որ չափով լրացնել խոսքի բացակայությունը: Այս հիվանդների մեծամասնության շրջանում հայտնաբերվում են վիճակի օրգանական պատճառներ, իսկ փոքր մասի՝ կարող են դիտվել մանկական աուտիզմ և զարգացման այլ ընդհանուր խանգարումներ: Հաճախ են

էպիլեպտիկ, նյարդային և մարմնական խանգարումները:

3. Ծանր աստիճանի մտավոր հետամնացությամբ հիվանդները կլինիկական պատկերով, օրգանական ծագումնաբանությամբ և ուղեկցող խանգարումների առկայությամբ նման են նախորդ խմբի հիվանդներին, միայն բնորոշ է գործունեուության ավելի ցածր մակարդակ: Վաղ տարիքից դիտվում են շարժունակության արտահայտված խանգարումներ, խոսքը նվազագույն է, հիմնականում ի վիճակի չեն տիրապետել ինքնախնամքի և շփման հմտություններին: Դեռահասության տարիքում կարող է խոսել և շփվել՝ առանց զրուցելու ունակության, կարող է ձեռք բերել հիգիենայի տարրական հմտություններ: Հասուն տարիքում կարող են մասնակիորեն սովորել ինքնախնամքի և ինքնապաշտպանության հմտությունները՝ մշտական վերահսկողության պայմաններում: Մտավոր զարգացման գործակիցը, սովորաբար, 20-34-ի սահմաններում է:

4. Մտավոր խորը հետամնացությամբ (ապուշությամբ) հիվանդներն ի վիճակի չեն հասկանալ հանձնարարություններն ու պահանջները, հիմնականում անշարժ են կամ խիստ սահմնափակ շարժունակ ՝ զգայաշարժական ոլորտի գործունեության նվազագույն ունակությամբ, տառապում են ակամամիզությամբ, ակամակղությամբ, նրանց հետ հնարավոր է միայն ամենատարրական, ոչ խոսքային շփում: Դեռահասության շրջանում հնարավոր է որոշ շարժողական ակտիվություն, կարող է ինքնախնամքի որոշ տարրեր յուրացնել, հասուն տարիքում՝ շարժողական ոլորտի և խոսքի որոշ զարգացում: Նրանք մշտական օգնության, խնամքի և հսկողության կարիք ունեն: Մտավոր զարգացման գործակիցը 20-ից ցածր է: Մեծ մասի մոտ հայտնաբերվում է օրգանական ծագում: Շարժունակությունը սահմանափակող ծանր նյարդային, մարմնական խանգարումները, դեպրեսիան, խլությունն ու կուրությունը հաճախակի ուղեկցում են մտավոր խորը հետամնացությանը: Հատկապես հաճախ ուղեկցում են զարգացման ընդհանուր ծանր խանգարումները:

Մտավոր հետամնացության պրագայում, աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտի մոտ երևակայության զարգացմանը նպաստող հնարները տալիս են նվազագույն արդյունք:

Նկ. 7. Մտավոր հետամնացության համախտանիշ ունեցող երեխա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով «Երևակայության զարգացման հնարների մշակումը աշխարհագրության ուսուցման ընթացքում» թեման, համեմատելով տարբեր դասարաններում աշխարհագրության ուսուցման իրականացման առանձնահատկությունները և կատարլով տարատեսակ վերլուծություններ՝ արեցինք հետևյալ եզրակացությունը.

Աշխարհագրություն առարկան փորձարկումների (էքսպերիմենտների), նորամուծությունների, զանազան հնարներ մշակելու համար ուսուցչին ընձեռում է լայն հնարավորություններ: Աշխարհագրությանը հատուկ համալիր մոտեցումը յուրաքանչյուր հարցին, ուսուցչի համար ստեղծում է խիստ բարենպաստ ասպարեզ՝ աշակերտների հետ անսահմանափակ հնարներ, միջոցներ օգտագործելով, հստակ դրված նպատակակետին հասնելու համար, այն է՝ զարգացնել աշակերտի երևակայությունը, ուղղորդել նրան աշխարհագրորեն վերլուծելու բնության մեջ կամ հասարակական կյանքում տեղի ունեցող յուրաքանչյուր երևույթ:

Սակայն հարկ է հիշել, որ յուրաքանչյուր դասարանի համար անհրաժեշտ է մշակել յուրօրինակ հնար, որը կհամապատասխանի տվյալ տարիքային խմբի երեխաների մտավոր զարգացվածությանը, ինչպես նաև հետաքրքրություններին, այլապես հնարը պարզապես չի գործի:

Որպես վերջաբան ավելացնենք նաև, որ Աշխարհագրությունը, լինելով վաղուց կայացած գիտություն՝ իր ճյուղերով և ենթաճյուղերով, միևնույն ժամանակ, մարդկային երևակայությունը զարգացնելու հարցում այն մրցունակ է և ի զորու է համեմատվել արվեստի յուրաքանչյուր ճյուղի հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կիրառական-վերլուծական պրակտիկայի ընթացքում աշակերտների հետ աշխատելիս նկատեցինք, որ նրանց գրավում է այս կամ այն հնարների կիրառումը ուսուցչի կողմից: Հատկապես, երբ նրանք ներգրավվում են դասապրոցեսի մեջ որպես ակտիվ և որոշիչ դեր ունեցող մասնակիցներ: Աշակերտներին հաճելի է նաև, երբ ուսուցիչը ցանկություն է հայտնում լսել նրա անհատական կարծիքը այս կամ այն հարցում, այսպիսով աշակերտը առավել շահագրգռված է լինում դարին ակտիվ մասնակցություն ունենալու հարցում:

Հաշվի առնելով աշակերտների այսօինակ հետաքրքրությունը, առաջարկում ենք նրանց հնարավորություն տալ, ոպեսզի իրենք տարբեր հնարներ մշակեն և ներկայացնեն ուսուցչին, դրանք կարող են լինել խաղի տեսքով, և կամ փոքրիկ բեմադրության, կամ հանելուկների հնարման տեսքով և այլն:

Առաջարկում եմ օժանդակել, որպեսզի աշակերտները աշխարհագրության ուսուցման ընթացքում իրականացնեն իրենց փոքրիկ երազանքները, թույլ տալ նրանց ինքնաարտայտվել և բացահայտել ներքին մարդու ընդունակությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Պրոֆ. Ա.Վ.Պետրովսկի «Ընդհանուր Հոգեբանություն»:
  «ԼՈՒՅՍ» հրատարակություն, Երևան 1974
- http://doctors.am/hy/diseases/mental-deficiency
- https://krtutyun.wordpress.com
- Ուսումնաճանաչողական պրակտիկայի թղթապանակ: Երևան 2016
- Կիրառական-վերլուծական պրակտիկայի թղթապանակ: Երևան 2017